Ուսմունքներ Փրկչի տասանորդի օրենքի մասին

Ուսումնասիրեք հետևյալ աղբյուրները՝ փնտրելով, թե ինչը կարող է մոտիվացնել ձեզ կամ ուրիշներին հնազանդվել տասանորդի օրենքին:

Սուրբ գրություններ.

Մաղաքիա 3.8–10, Հովհաննես 7.17, Վարդապետություն և Ուխտեր 119.5–7

Խոսքեր և այլ աղբյուրներ.

Երիտասարդ տղամարդկանց գերագույն նախագահ Սթիվեն Ջ. Լանդն ուսուցանել է.



Երբ երիտասարդները վճարում են լրիվ տասանորդ, նրանք մնայուն կապ են ստեղծում Երկնային Հոր հետ: Ամեն անգամ, երբ նրանք հնազանդվում են այդ պատվիրանին և վճարում լրիվ տասանորդ, ստեղծվում է զոհաբերության և կապվածության մի նոր շղթա: (Սթիվեն Ջ. Լանդ, «Սեմինարիա, ինստիտուտ և այլ գործեր» [Սեմինարիայի & ինստիտուտների տարեկան ուսուցման հեռարձակման ժամանակ արված ուղերձ, հունվար 27, 2023], broadcasts.ChurchofJesusChrist.org)

Երիտասարդներին զորացնելու համար. Ընտրություններ կատարելու ուղեցույց գրքույկում խորհուրդ է տրվում.

Աստծո հանդեպ սեր դրսևորեք՝ պահելով Նրա պատվիրանները: . . .

. . . Երբ ծոմ եք պահում և վճարում տասանորդն ու նվիրաբերությունները, դուք ցույց եք տալիս Աստծուն, որ Նրա գործը ձեզ համար ավելի կարևոր է, քան նյութական բաները: (*Երիտասարդներին զորացնելու համար. Ընտրություններ կատարելու ուղեցույց* [2022], 11–12)

Յոթանասունի անդամ ծառայելիս երեց Սթենլի Գ. Էլիսը հարցրել է.



Արդյո՞ք մենք ունենք *հավատք*՝ վստահելու [Տիրոջ] խոստումներին տասանորդի հետ կապված՝ ընդունելով, որ մեր եկամտի 90 տոկոսով *և Տիրոջ օգնությամբ* մենք ավելին կստանանք, *քան մեր վաստակած 100 տոկոսով*: (Ստենլի Ջ. Էլիս, «Արդյոք մենք վստահո՞ւմ ենք Նրան Որքան դժվար, այնքան լավ», *Լիահոնա*, նոյեմբեր 2017, 114)

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.

Տասանորդի օրենքի մասին ուսուցանելիս և վկայելիս, մենք հաճախ շեշտում ենք անհապաղ տրվող, մեծ և անմիջապես նկատվող նյութական օրհնությունները, որ ստանում ենք: Եվ, իհարկե, նման օրհնություններ տրվում են: Այնուամենայնիվ, այս պատվիրանին հնազանդվելիս մենք ստանում ենք բազմազան օրհնություններ, որոնք կարևոր են, սակայն աննկատ: . . .

Օրինակ՝ մեր ստացած աննկատ, սակայն կարևոր օրհնություններից է երախտապարտ լինելու հոգևոր օրհնությունը, որը հնարավորություն է տալիս մեզ գնահատել այն, ինչ ունենք՝ զսպելով մեր ցանկությունները: . . .

Երբեմն, մենք խնդրում ենք Աստծուց հաջողություն, և Նա տալիս է մեզ ֆիզիկական և մտավոր ուժ: Մենք խնդրում ենք բարեկեցություն և ստանում ենք մեծ հեռանկար և ավելի շատ համբերություն: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Երկնքի պատուհանները», *Լիահոնա*, մայիս 2013, 17–18)

Մերի Ֆիլդինգ Սմիթը Հայրում Սմիթի այրին էր և Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի մայրը: Երբ մարդկանցից մեկն ասաց, որ նա չափազանց աղքատ է՝ տասանորդի օրենքը պահպանելու համար, նա պատասխանեց.

Ուզում եք ինձ զրկել օրհնությունի՞ց: . . . Ես վճարում եմ տասանորդը ոչ միայն այն պատճառով, որ դա Աստծո օրենքն է, այլ դա անելով՝ ես օրհնության եմ սպասում: (Մերի Ֆիլդինգ Սմիթ, մեջբերումը Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, համաժողովի զեկույց, ապր. 1900, 48)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_412-1